“ABOVYAN WINTER BLITZ-2025”
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի շախմատի դպրոց» ՀՈԱԿ-ը կազմակերպում է **“ABOVYAN WINTER BLITZ-2025”** միջազգային վարկանիշի հաշվարկով՝ կայծակնային շախմատի մրցաշար: Մրցաշարը կմեկնարկի դեկտեմբերի 21-ին ժամը 12:00-ին:

Մասնակցել կարող են FIDE ID-ով շախմատիստները:

Մրցաշարը կանցկացվի շվեյցարական մրցակարգով՝ 7 խաղափուլով:

Մրցաշարի ժամակարգը՝ 3 րոպե + 2 վայրկյան է:

Մրցանակներ.

Առաջին – 50 000 ՀՀ դրամ,

Երկրորդ – 40 000 ՀՀ դրամ,

Երրորդ – 30 000 ՀՀ դրամ:

Հատուկ մրցանակ կանանց հաշվարկում՝ 15 000 ՀՀ դրամ:
Հավասար միավորների դեպքում մրցանակները չեն կիսվում և որոշվում են ըստ լրացուցիչ ցուցանիշների՝

1- Հատված Բուխհոլց, 2- Բուխհոլց, 3- անձնական հանդիպում, 4- սևերով խաղացած պարտիաների քանակ, 5- հաղթանակների քանակ:

Գրանցման համար կատարել 3 000 ՀՀ դրամ մուտքավճար **900105201652** հաշվեհամարին Աբովյանի գանձապետարան), նպատակ դաշտում նշել մասնակցի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը, և կտրոնը մինչև գրանցման վերջնաժամկետը ներկայացնել շախմատի դպրոց կամ ուղարկել abovyanchess@gmail.com էլ. հասցեին: Մուտքն ազատ է GM, WGM, IM, WIM կոչումներով շախմատիստների համար: Գրանցման վերջնաժամկետը դեկտեմբերի 19-ն է, մինչև ժամը 14:00-ն: